

ծանօթ հայ ճարտարապետ Թորոս Թորամանեանի գործակցութեամբ: J. Strzygowski իր նոյն գրքին մէջ (էջ 502-4) մեզ կը լուսաբանէ թէ Թէոդոսի կիսակործան եկեղեցին հայ ճարտարապետի ձեռքով շինուած է, և ունի հայկական մասնաւոր ոճ մը: Հետեւեալն է անոր լուսաբանութեանց իմաստը. եգիպտական, Ասորական, Միջագետաց եւ Արեւմտեան ճարտարապետութեան մէջ եկեղեցիին գմբէթը կը զետեղեն շէնքին ո՛չ թէ «մէջ տեղը» այլ կամ արևելեան կողմը, կողակին և դասին մօտերը, և կամ արևմտեան կողմը՝ շէնքին անդաստակին վրայ. իսկ հայ ճարտարապետը՝ եկեղեցւոյ հիմնարկութեան չսկսած, լըջօրէն կը մտածէ գմբէթին շինութեան վրայ. այդ պարագան, անոր համար օրէնք մը, էական սկզբունք մըն է, որպէս զի «գմբէթը շէնքին մէջ տեղը» ըլլայ (Der kuppel du Mitte). դարձեալ, հայ վարպետին համար, գմբէթը շէնքին ջիղն է. Թէոդոսի վանքին Ս. Կուսի մայր եկեղեցւոյն գմբէթը ճիշտ «մէջ տեղն» է, նման Հայաստանի եկեղեցիներուն, ուստի նոյն եկեղեցիին շինել տուողին հայազգի ըլլալը, եւ հայ ճարտարապետութեան օրէնքին համաձայն, եկեղեցւոյ գմբէթը ճշդօրէն «մէջ տեղը» ըլլալը նկատի առնելով՝ J. Strzygowski կը հարցնէ թէ չե՞նք հակիր ընդունել թէ նոյն եկեղեցին շինողները Հայեր էին. եկեղեցին հայաշէն էր: Յիշեալ գիտունին յատակագիծը բազդատելով մեր Մայր Մաշտոցին եկեղեցեաց «հիմնարկութեան» յատակագծին հետ, ըստ ամենայնի իրաւունք կու տանք յարգելի գիտնականին լուսաբանութեանց եւ գիտական ճշգրտմանը, մեր ականատեսի վկայութեամբ ևս հաստատելով թէ Թէոդոսի վանքին եկեղեցին շինող ճարտարապետը հայ մըն է և ճշգրտէն հայաշէն:

Մենք գրեցինք այս տողերը, որքան քրիստոնէական այս հին հաստատութիւնը ծանօթացնելու տենչով, նոյնքան և աւելի հայ պատմագրութեան սեպհական ծիրանին հոգցնելու մեծին Սեբաստոյ զաւակներէն միոյն՝ հայազգի Սովորոնիսի՝ որ իր կազմակերպիչ ոգւով և հանճարովը յաջողած է ոչ միայն մեծ ծառայութիւն մատուցանել պատկանած վանքին և Երուսողէմի Անապատին, այլ նաեւ իր հայրենի երկրին հոգեւոր կեանքը եւ գեղարուեստի գեղեցկութիւնները շքեղօրէն պայծառացնել մինչեւ Պաղեստինի խորը, ի պանծացումս այն ցեղին որմէ սերած է ինքը: